

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36TH SURT

ՀԱՐԱԹ 30 ՄԱՅԻՍ 1887

0.11 3875

ԱՄՐԱՅԻՆԻՆ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ֆլ.ս.կ.՝ Բաժանորդագրուածեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆըրանք: Բաժանորդագները ղրկելու է առ մատակարարուծիւն Արեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Դալամիա, Նորատուենեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա.
*
Ա. Ա.
ԱՅՄՈՆԹՈՎ
ՀԻՐԱԲԱՆ
(ՍԻՐԱԳԻՆԻՔ)
ՏՐ. Ռ. ՌՕՊԵՆՍՈՆ
Պ. Տ.
ԱՂԳԱՅԻՆ
(ՎԵՆ. ԿԱՆՈՆԻՆԻ ԿԱԶ-
ԴՆԱԳԵՐԸ)
ԼԵՐՈՒՆԹՈՎԻ ԹԱՐԳՄԱ-
ՆՈՒԹԻՒՆՆԵՐ
ԴԱՍԱՎԵՐ
ԹԵԺՏ. Ա. Գ. ՓԱՆՍԵԱՆ
ՈՐՈՒՄՆ ԿԵԱՆՔԸ
Պ. Գ. ԱԶԿԵԱՆ
ՍՈՂՈՋԱՐԱՆԱԿԱՆ
ՀՐԵԱՅ ԵՆ ԶՈՒՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 29 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍ

U. 2 9 U. 3 1 6

Վ. Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԳԻՐԸ

Անցեալ թուով ծանուցինք թէ՛ ապարդիւն մնացած է Վեհ. Կաթողիկոսի պաշտօնադիրն որով կը բողոքէր պետական դպրոցներու մէջ Հայոց կրթոնն հայ աշակերտաց ռուսերէն լեզուաւ աւանդման դէմ: Արդէն ուրիշ կողմանէ լուրեր տարածուած են թէ՛ Վեհ. Կաթողիկոսի եւ Կովկասի ռուսական իշխանութեանց միջեւ յարաբերութիւնք ցրտացած են: Մեր ասացած մասնաւոր թղթակցութիւնք ըստ բաւականին կը խօսին այս դէպքերու վրայ:

Կովկասի կառավարութիւնն յոյժ զայրացած է Կաթողիկոսի դէմ այն պատճառաւ որ Ն. Վեհափառութիւնը հրատարակութեան տուած է իւր բոլոր քաղերէն : Ի հարկէ այդ հրատարակութիւնն անախորժելի չէ Ռուսիոյ կառավարութեան, ո՛չ միայն հայ մամուլն այլ եւրոպիոյ լրագրիք արձագանդ տուին այդ արդար բողոքին : Հրատարակութիւնն անպատեհ էր . Վեհ. Կաթողիկոսը մատուցած էր իւր բողոքն , պարտաւոր էր սպասել արդիւնքին, եթէ կառավարութիւնը նրկատողութեան առնուր Վեհափառի բողոքներն, արդէն ինդիրն, ինքնին կը վերջանար եւ հարկ չէր մնար զայն հրատարակելու . իսկ եթէ կառավարութեան պատասխանն աննպաստ լի-

ներ, այնուհետեւ բողոքագրոյն հրատարակութիւնը ներելի կրնար լինիլ։ Մենք աղքատական էր յո՞ւսալ թէ բողոքգիրն հրատարակութեան տալով կարելի էր խոնարհեցնել ռուս կառավարութիւնը։ Մեր իրաւունքներն ու համոզումներն որքան ալ արդար լինին, բայց եւ այնպէս մեծ կառավարութիւն մը հաշիւներ ունի եւ չփափագիր որ յաջաւթաբարձի այնպէս երեւի թէ՛ Հայոց հոգեւոր իշխանութեան առաջ կը խոնարհի։ Ոչ ուրեք օրէնք է հապճեպով հրապարակ հանել դիւանագիտական գրութիւններն։ Հետեւաբար մեծ սխալ մը եղաւ Կաթողիկոսի կողմանէ այդ պաշտօնագրոյն հրատարակութիւնն։

Եւ սակայն Կաթողիկոսն ալ գուցէ
կարող չէր ուրիշ կերպ գործել: Ամեն
կողմանէ ցատում, զայրոյթ կար ընդ-
դէմ Կաթողիկոսի թէ՛ ջերմ պաշտպան
Հանդիսանար աղգի եւ եկեղեցւոյ յա-
հուց, եւ ի թէ քէն ուշ գէթ լինէր
կը տեսնենք թէ այդ զայրոյթը բոլո-
րովին անհիմն չէր: Առաջին անգամ
լինելով Մանուկ Հաղորդեց Ռուսիոյ Կա-
թողիկոսութեան նորանոր որոշումներն
ընդդէմ Հայոց, եւ բոլորեց Կաթողի-
կոսի անտարբեր ընթացքի դէմ: Բայց
այդ դէպքերէն մէկ երկու ամիս վերջ
կը բողոքէր Վեհ. Կաթողիկոսն, հետե-
ւաբար մեզ ներելի է ենթագործել թէ՛
Պոլսոյ Հայոց յուզումն ներգործեց Կա-
թողիկոսի եւ Սինհոդակաւնաց վրայ:
Վեհ. Կաթողիկոսն եւ Սինհոդականք
կը հարկադրուէին արդարացնել իրենք
զիրենք ընդհանուր Հայութեան առաջ
եւ այդ արդարացման միակ միջոցն էր
ի հրատարակութիւն տալ առ իշխան
Տոնտուքոֆ-Քորսաքոֆ ուղղեալ բողո-
քագիրը: Թէպէտեւ այդ հրատարա-
կութիւնը կը վնասէր գործին, բայց
Կաթողիկոս եւ Սինհոդականք կը
հանդատանային:

Այս ամենը դժբաղդութիւններ են և այսպիսի դժբաղդութիւններ միշտ պիտի պատահին միշտ հարուածելով դառնալէս աղբն , քանի որ հեռատեսութիւն եւ անշահախօսող զգալիութիւնն ուղեցոյց չէ մեր գործոց, Ամէն անգամ որ ընտրութիւն մը կ'ընենք պէտք է մեր գլխաւոր մտածութիւնը ինի յանձնել ազգային բարձր պաշտօն մը այնպիսի անձի մը որոյ հայրենասիրութիւնը , կրօնասիրութիւնը կասկածանաց ենթակայ չլինի ազգին առաջ : Հայոց ազգին կառավարիչներն անդադար յարաբերութեան մէջ են տիրող կառավարութեան հետ . կրներկայաւան այնպիսի խնդիրներ որոց համար անհրաժեշտ է կատարելապէս գաղտնապահութիւն , եւ սակայն լիճնալէս կառուիլ է գաղտնապահ լինիլ երբ անգին կայ ժողովուրդ մը որ կասկածոտ է, որ հաւատք չունի զինքը կառավարողներուն միայն , եւ երբ այդ կա-

ռաւարդոյններն ալ կարօտ են այդ ժողովուրդի աջակցութեան: Մենք ներկայ պարագայից մէջ չենք ուզեր քրննել թէ՛ ի՞նչ են Վեհ. Կաթողիկոսի զգացումներն ու մտածութիւններն, այլ կ'ուզենք հաւատալ թէ Վեհ. Կաթողիկոսը կը գործէ ազգին շահուց կատարելապէս համաձայն եղանակաւ եւ սակայն պարտաւորուած է ինքզինքն արդարացնել, ինչո՞ւ. վասն զի անցելոյն մէջ, յիշաւ թէ յանկրաւի, ժողովուրդն իւր հետ չէր եւ բարձրացաւ ի յաթոռ հակառակ ազգին, մասնաւորապէս Ռուսիոյ Հայոց փափագանաց: Եթէ Հայոց Հայրապետ լինէր Ներսէս Պատրիարքը, Խրիմեան Հայրիկը կամ Սեդեքիսեղեկ Սրբազանն որոյ մասին ուրիշ առթիւ ինչ որ ալ ըսենք, բայց չենք կրնար ըսել թէ ազգին ստուար մեծամասնութիւնն անվստահ էր նորա վրայ, միթէ հարկ պիտի համարէին հաղորդել այն ամէն գործերն որոց մասին դատարանապետութիւն անհրաժեշտ է: Ո՛չ: Հայոց ազգը պիտի ըսէ. «Այո՛, ռուս կառավարութիւնն այս ինչ այն ինչ անկրաւ միջոցներուն կը դիմէ ընդդէմ մեզ, բայց Կաթողիկոսնիս արթուն է և Կաթողիկոսնիս գիտէ թէ ժողովուրդն իրեն հետ է, եւ երբ հարկ լինի ինք կը դիմէ ժողովուրդի աջակցութեան»: Եւ Կաթողիկոսը կը գործէ ինչպէս որ պարագայները կը պահանջեն: Թերեւս Մակար Կաթողիկոս ալ գործէ այն ոգւով, ինչ ոգւով որ պիտի գործէր ուրիշ Կաթողիկոս մը, եւ սակայն անցեալը կայ. ժողովուրդը կատկածոտ է: Կաթողիկոսական ընտրութեան միջոցին աշխարհական պատգամաւորք կ'ըսէին Սիւնհոդակիանաց. «Ձեք ուզեր Կաթողիկոսացնել ազգին ընտրածներէն մին եւ սակայն գիտէք թէ առանց ազգի սիրոյն եւ համակրանաց չէք կարող կառավարել»: Սիւնհոդակիանք խուլ կեցան եւ իրենց մեքենայութիւններովն յաջողեցան. այժմ ամէն օր կը տեսնենք հետեւութիւններն յորոց մին է ներկայ պարագայն:

Արդեօք պիտի գա՞յ օր մը որ սա պարզ մտածութիւնն ունենանք թէ՛ բարձր պաշտօններն անոնց միայն տանք, որք արժանացած են զզոյն կոյր վրստահութեան: Մեծ հաւատք չունինք: Եւ մեր թերեհաւատութեան պատճառները պարզելու համար քստ բաւականին տեղ չունինք այժմ: Ամէն ուրեք բարոյական տկարութիւն կը տիրէ. կեղծաւորութիւնն եւ ստորին շահախնդրութիւնը միայն կրնան յաղթանակել:

Իսկ չարեաց դարմանը պէտք է
սպասել աներկիւղ և լուսաւորեալ քա-
րոզիչներէ եւ հրապարակախօսներէ .
եկեղեցւոյ բեմն եւ մամուլն, ահա՛ մեր
ապաստանարանը :

U. U.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ “ԴԱՍԱԽՔԻ”

Որքան գիշերներ Պ. Նիկողոսեանի հետ միայնակ նստած խօսակցած ենք Կովկասու գիւցաղնութեանց վրայ, եւ միշտ Լէրմոնթովի անունն հիացմամբ կ'արտասանէր հայ սպայն : — Այն, եթէ Հարունը, դասալիք Հարունը թարգմանուէր ի հայ, կ'ըսէր նա Օր մ'ալ ըսաւ թէ արդէն Փրանսերէնի թարգմանել տուած է, այսինքն խառններն, եւ անցեալներս աւելցուց թէ Աղեքսանդր Էֆէնտի Փանոսեանի տուած է Փրանսերէնն, որպէս զի վերածէ տաղաչափութեան : Գտայ Աղեքսանդր Էֆէն եւ խնդրեցի որ նախ հայերէնի վերածէ Մալի համար : — Երբ կ'ուզես — Երբ օրէն, պատասխանեցի : — Անկարելի է, ըսաւ : — Գեղեցիկ տաղանդի մը համար գեղեցիկ բանաստեղծութիւն, գեղեցիկ կերպով հայացնելու համար ոչինչ կայ անկարելի, ըսի : Երբ օր վերջ թարգմանութիւնն ունեցայ ցնծացի, քանզի էր : Լէրմոնթովի մասին բաւական տեղեկութիւններ կարգաւցած եմ եւ նորա սիրահարներէն եմ : Երբ կարգացի Փանոսեանի թարգմանութիւնն, Լէրմոնթովի գտայ : Նիկողոսեան գոհ պիտի մնար : Թարգմանուած ամէն մէկ բառ, ամէն մէկ տող կը մտարկէ մեր արիւնն : Ահա՛ ինչպէս աշխարհիկ լեզուով գիւցաղներգութիւն մը կրնայ թարգմանուիլ Մխիթարեան քաջ տաղաչափներն իրաւունք ունին յարգելու մեր երիտասարդ բանաստեղծը, — միայն այդ թարգմանութիւնն իսկ կը բաւէ Աղեքսանդր Փանոսեան բանաստեղծ համարելու : Աղեքս. Փանոսեան կարծես թէ միակ անձն է ի Պոլիս որ առանց վեհակոյ Մխիթարեանց աշակերտած լինելու կարող եղած է երբեք չը մեղանչել տաղաչափութեան ամենանուրբ աւանդութեանց զէմ : — Այս կը խոստովանին Մխիթարեան վարդապետներէն շատերը :

Քանի մը անգամ առիթ ունեցած եմ յիշելու Լերմոնթովը : Ազնուական սպայ մ'էր աքսորուած ի Կովկաս, Նիկողայ կայսեր հրամանաւ : Անդ փոխանակ մարտնչելու թշնամեաց դէմ սիրահարեցաւ Կովկասու : Ձերբզներու, չէչեններու, լէզկիներու քաջութիւնը զարմացուց զնա : Լեռնականներն իրենց լեռներու համար կը սպասեցան իրեն : Որոշ սպայն մուգաւ թէ նորսուսի թշնամիներն են եւ երգեց փառքերն լեռնականաց ոչք կ'ըսէին «Թշնամին ուսն է» : Օր մը, զեռ երեսուն տարին չը մտած, մենամարտութեան մը մէջ կ'իյնար կը մեռնէր Լերմոնթով : ամբողջ Ռուսիա լացաւ երիտասարդ բանաստեղծ զինուորին վրայ :

Ձերբզները ժողովրդական ըրաւ Ռուսիոյ մէջ : Փանոսեան Էֆէնտիի թարգմանածը ամենամարտաշարժ գրուագ մ'է : չէրբէզ մը պատերազմի դաշտէն փախտական կը վերադառնայ եւ ոչ ուրեք ընդունելութիւն կը գտնէ :

Կը փափաքէին որ թուրք գրագէտներ ԴԱՍԱԽԻՔԸ թարգմանեն հայերէնէ թուրքերէնի եւ անտարակոյս ամենաճերմ համակրանաց պիտի արժանանայ թուրք ժողովուրդի կողմանէ : Ուր էր թէ Լերմոնթովի ամբողջ գործերուն ծանօթանար թուրք հասարակութիւնը :

Ա. Ա.

Մ. Ա. Ս. Ի. Ս.

Այժման պէս սարսափահար փախա՛ւ Հարուն : Ձերդ նապաստակ արծուին առջեւ ելած ատեն, Խոյս տըւաւ նա սպաներազմի ահ՝ զգալուն Ուր հեղեղի պէս հոսած էր Ձերբէզ արիւն : Իւր հայրն եւ իւր երկու եղբայրն անդ զոհ եղան Անկախութեան, ազատութեան վրան մ'ուտին : Անոնց գլուխներն, հողաթաւալ, քարը ի գետին, Ամբարշտաց անգութ օտից լինին կոխան : Վերէ՛մ խնդրէ արիւնն անոնց օրք մահացան : Հարուն սակայն մոռնալով իւր պարտքն ու պատիւ, Կուռյն վայրէն փախաւ փութով, վախկոտ սրտիւ, Անդ թողով իւր զէնքերն : Իւր թուրն եւ հրացան : Գիշերն՝ յոյժ թանձր անթափանց մէզն որ տառանի Հորձանախիտ պատեց ի մի ան ամենայն կողմ, Իբր ի սպիտակ անծայրածիր մի պատանի : Յարեւելից փըչեց ուժգին ցրտաշունչ հողմ, եւ լուսնկայն ալ երեւաց՝ ոսկեայ՝ լըռին, Մարգարէին անապատին վերեւ, հետին . . . : Վաստակաբեկ եւ խռովեալ ու ծարաւի, Սրբելով քիթոն արիւնախառն իւր երեսին, Լուսնի լուսովն՝ Հարուն տեսաւ անշուք ու սին Մի յարկ, ժայռից մէջ տեղ : Խրճիթ մ'էր յիրաւի : — Ամենուրեք խաղաղութիւն՝ անդորր տիրեն : Լուռ, անշուք յառաջանայ . . . : Մարտէն ահեղ Մէն միայնակ եւ անվրնաս հասած յայն տեղ Դէպ ի դեղնած ժայռն ընթանայ արագօրէն : Լոյս տեսնէ անդ, հոն է տէրն : անդ մտնել կամի : Վարանի պահ մ', ապա սիրտն ոյժ վերըստանայ : Կոչէ զՍէլիմ — անուն իւր հին բարեկամի — Այլեւոր ծերն հազիւ կարէ ձանձել ըզնայ : Անկողնոյն մէջ, անտէր, անձայն ու թալկադէմ, Տառապագին կը մաքառի օրհասին դէմ : — «Ամենակալն՝ քր իւր հրեշտակն յղեց առ բեզ՝ «Պատուէր տըւաւ նրմա փրկել ըզբեզ այսօր «Որպէս զի դու լինիս պաշտպան փառաց Ձերբէզ . . . «Ինչ լուր, տեսնե՛նք . . . » Կը հարցունէ ձայնիւ անդոր Սէլիմ, որոյ աչքն հըրահրի յուսոյ բոցով եւ ոյր սրտին մէջ զինուորի արիւնն եռայ եւ կը ցնցէ զայն իւր մահուան մահճին վերայ . . . : — «Մենք երկու օր մարտնչեցանք լիակորով, «Կիրճերուն մէջ՝ որք մեր ճըգանց եղան վրկայ, «Անկան իմ հայրս եւ իմ երկու եղբայրս արի : «Հալածական, վանեալ իբրեւ գազան վայրի, «Անապատին մէջ փախչելով ես հոս եկայ : «Խեղայեզ, դող ի սիրտ, ոտիւք արիւնահոս, «Քարուտ, փըշտ ճամբաներէ վաղեցի ես : «Ճամբաներէ՝ ոյց հետեւին գայլն ու աղուէս, «Ահա նըկուն ու շնասպառ ես եկայ հոս : «Հատան Ձերբէզը թշնամին է ամենուրեք . . . «Ընկա՛ւ ուրեմն, ո՛վ բարեկամ, զիս յարկիդ տակ, «Կ'երգնուեմ ահա թէ բարութեանդ այդ յիշատակ «Մինչեւ ցըմահ ես չը՛ պիտի մոռնամ երբեք . . . » — «Հեռի՛ աստի, կորի՛ր, գոչէ՛ ծերն սգեվար, «Դու միմիայն անարգանաց ես արժանի, «Եւ ո՛չ սիրոյ, ո՛չ օրհնութեան : Յարկս ընտանի «Ձանի՛ տեղի բեզ պէս անսիրտ վատաց համար . . . » Ամթապարտ, խղճէն տանջեալ, այլ անզայրոյթ Լուսէ Հարուն այս կշտամբանքն ում տուայ նայ : Իւ թողու հիւզն այն հիւրամերժ, ու փոյթ ընդ փոյթ Լըռին, անձայն եւ անմիմունչ կը հեռանայ . . . : — Մի այլ դըրան դէմ կը հասնի ու վերըստին Կանկ կ'առնու նա : — Իբրեւ համարյոյ մի բոցավառ Նրաւը երազն անցեայ աւուրց շիջեալախա Գուրգուրանօք հըսի նորա սառած ճակտին : Ինչ քաղցրութիւն, ինչ լոյս պայծառ, ջինջ, երկնային, Ողողեն իւր հոգոյն խաւարն այն ահարկու : Թըւի նըմա նշմարել հուր աչքեր երկու Որք՝ սիրափայլ իւր աչքերուն մէջ կը նային . . . : եւ կը խորհի : «Նէ կը սիրէ զիս տակաւին, «Նէ ինձ համար կը շնչէ ու կ'ապրի միայն . . . » Կուզէ մտնել : Իւր ակունքին հնչէ մի ձայն . . . : եւ հինաուրց երգին շեշտերն ահա լըսուին :

«Լուսնակին դէմքն երեւի
«Լըռին եւ հանդարտ,
«Մարտիկն արի, կորովի,
«Կը դիմէ ի մարտ»
«Ճիկիտ լընու գիւր հըրագէն,
«Մինչդեռ երգէ սիրուհին»
«Սէրդ իմ, լեր դու անվասորէն
«Անձնատուր բաղլին»

«Դէպ յարեւելս հայէ դու միշտ»
«Մարգարէին անձնըէր կայ»
«Որպէս պատուոյդ, նոյնպէս փառաց»
«Քանզի մատնիչն այն ամբարիշտ»
«Վախկոտն որ փութայ ի փախուստ»
«Այն որ թշնամույն դէմ՝ անահ»
«Ձը մարտընչիր մինչեւ ցըմահ»
«Դատապարտուած է ի կորուստ»
«Պատի մերժէ անձրեւն իսկ գալ»
«Սրբել անոր վէրքն արիւնոտ»
«Պիտ՝ անարգեն գիշակերք ալ»
«Անոր ոսկերց ճաշակն եւ հոտ»
«Մեր այն լերանց բոլոր կոյսեր»
«Պիտի մերժեն, ամող սրտիւ»
«Անամօթն այն եւ անպատիւ»
«Եւ նախատինք սեպեն զիւր սէր»

Կը հեռանայ Հարուն, լըբեալ եւ գլխիկոր,
Եւ վշտածին արատաւաց զոյգ կաթիլը խոշոր
Կը բխլին եւ զըլորին իւր բիրերէն վար . . .
Այլ նոյն պահուն, ուր տիրէ դեռ խորին խաւար,
Կը նշմարէ կիսափուլ մի հիւզակ, հեռուն,
Եւ՝ սրտատրոփ՝ կը ճանչէ գիւր հայրենի տունն
Եւ, վերըտին քաջալերեալ եւ յուսալից,
Մերձենալով, Հարուն զարնէ պատուհանին . . .
Իրեն համար թերեւս հոն ջերմ ուղիք աղօթից
Ուղղեն յերկինս, իւր արեւոր մայրն ու հանին
Որք կ'սպասեն իրենց որդւոյն՝ ո՛չ առանձին
Հապա իւր հօր եւ եղբարց հետ՝ վերադարձին :
— «Բայց, մայր իմ, բայց դուն ու ժառանգութիւն հէգ ճամբորդին»
«Հարունդ եմ ես, քո տարաբաղդ կրտսեր որդին»
«Որ՝ ազատած վայրագ Ռուսաց զնդակներէն»
«Գորովալիր թեւոյցդ՝ մէջ դաւանայ նորէն» . . .
— «Մինակ . . .»
— «Մինակ . . .»
— «Հայրդ եւ եղբարդդ ո՞ւր մընացին . . .»
— «Մեռան . . .»

— «Օրհնէ՛ թող Մարգարէն ըզմահ նոցին»
«Եւ անոնց վեհ հոգիքն հանգչին թող լուսածիր»
«Հրեշտակաց գիրկն . . . Անոնց վըրէժն դու լուծեցիր» . . .
«—Ո՛չ . լեռնէ լեռ սըլացայ ես նետի նման»
«Սուրս եւ գէնքերս թողլով ի մէջ ձեռաց օտար»
«Եկայ, մայր իմ, որ ըստիմեմ վիշտդ անսահման»
«Սրբեմ արցունքդ, ըլլամ նեցուկդ ու մըլխիթար» . . .
— «Բա՛ւ է ալ, բա՛ւ, լըռէ՛, կեա՛վա՛ւր, գարշիւ չար»
«Որ չը գիտար քաջորդւոյ պէս մեռնիլ փառօք»
«Կորի՛ր՝ աստի. գընա՛ յածիլ անշուք, անօք»
«Մի՛ աղտեղեր խոնջեալ կենացս աւուրքն յետին»
«Վա՛տ մ'ես դու պիղծ, եւ չե՛ս բընաւ դու իմ որդին»
Եւ կը լռէ, ա՛լ չը խօսիր մայրն անողոր . . .
Պատուհանին առջեւ, ի զուր, անդ ի մըլթան,
Մըմունջը, հառաչը, հայցուածք, ողբը եւ անէծք թնդան,
Որոց՝ ընդ իւր ամօթալից կենաց թըլուաւ,
Մի գաղտնի ուժգին հարուած վերջ տայ իսպառ . . .
— «Աւաւօտուն, մայրն՝ երբ տեսնէ զայն անկենդան՝
Գլուխն ի միւս կողմ՝ կը դարձունէ, ցուրտ, անտարբեր»
Բարեպաշտը ալ մերժեն զընել զայն ի դամբան,
Դիակին չուրջն, ոռնացող ու նօթի չուներ
Խորին վէրքէն հոսող արիւնն լիճեն անյագ,
Անշունչ մարմնոյն ալ հայհոյեն փոքրիկ տըղաք :
— «Փախստական Հարունի վարքն ու մահն անարգ»
«Ժողովրդեան աւանդ ու թեանց անցաւ ի կարգ»
«Թէ՛ անոր վատ հոգին, յաւէ՛տ սարսափահար»
Մարգարէին բոց աչերէն խոյս կուտայ յար,
Անոր ստուերն ալ գիշերն յածի, միշտ թափառուն,
Եւ թէ կուգայ նա, ամէն օր, ի ծագ այգուն,
Բաղխել մեղմիւ իւր մօր հիւզի պատուհանին,
Այլ Գուրանի սուրբ տուններն որք անդ կարգացուն
Կըստիպեն զայն փախչիլ հոն ուր մութ ամպը պատեն
Արագ՝ որպէս երբեմն փախաւ մարտի դաշտէն :

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ՊՈՅԱՃԸ ԳԻՒՂ, 29 մայիս

Կովկասեան արձագանքներ — Կատակերգութիւն մը — Իրական կեանք — Տիկին Արուսեակ — Երգի տէրն — Հայու թեան նշանակ մը — Հոսմ եւ Հայու-թիւն — Նաւասարդի օր մը :

Մինչ մենք կը զրկենք Ռուսահայոց Եւրոսաղէմի եւ ներքին կանոնագրի վէճերու լուրերը, Թիֆլիզի թերթերը մեզ անդա-դար արձագանքներ կը բերեն դրական տո-նախմբութեանց : Յոբելեան բանաստեղծի յորելեան դերասանի, յորելեան ուսուցչի, յորելեան խմբագրի, յորելեան վիպասանի ժողովուրդ մը՝ որ կը զարգանայ, որոյ սիր-տը կ'զգայ, որոյ հոգին կը բարձրանայ, այդպիսի ժողովուրդը միայն կրնայ կատարել այդպիսի հանդէսներ : Մենք կարող չենք բմբռնել այդ հանդէսներու մեծութիւնը : Չտեսանք թէ որպիսի տաղութիւն տիրեց երբ Աբե-է-է արտատպեց Մշակէ եւ Աբ-է-է-է-է սըանչելի նկարագրերն այն հանդէս-ներու ոյք կատարուած էին ի պատիւ Պ. Չմէկեանի : Ի՞նչպէս, մի գերասան որոյ ա-ռաջ հիացած կը մնան ամէն դասակարգի հայր : Գայթակղութիւն, ինչպէս գտնուին հայեր ոյք կարծեն թէ աշխարհիս վրայ բիրտ ոյժէն եւ ո՛ր եւ է կերպով գանձուած հարստութե՛ն գուրս յարգանաց ու մե-ծարանաց արժանի բան մը կը գտնուի Այլ եւս մնաւ բարով ազդութիւն եւ եկեղեցի, բանի որ վիպասանը, դերասանը կ'ուզեն համարել ազգի բարերարներ : Մի մարդ որ Վոսմաշուք տիտղոսը չկրէր, ինչպէս զնա ազգի բարերար անուանել :

Բայց ով որ Չմէկեանը տեսած է թա-տերաբեմին վրայ, կ'ըմբռնէ ժողովուրդի անհուն համակրանաց ուղին տու մեծ դե-րասանն : Հաւատացէ՛ք, որ ո՛չ մի պերճա-խօս քարոզիչ կարող է աւելի ցնցել ժողո-վուրդն որքան Չմէկեան : Գիւր մը տեսայ զինքը Թիֆլիզի քաղաքային թատրոնի բե-մին վրայ Պէպոյի դերին մէջ : Գնացած է խնդալու . կարողացած էի

Պ Է Պ Օ

ԿՕՄԵՏԻԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐՈՒՄՈՎ

Եւ ոչ որ զիս կը մեղադրէ երբ ըսեմ թէ՛ Կօմէթիայի մը հանդիսատես եղողն անշուշտ խնդալու նախապատրաստութիւններն ու-նի : Պէպոն բեմին վրայ եկաւ եւ ահա ամէն դէմքերու վրայ միայն տխրութիւն կայ : Սնդուկեանցի դիցապէս ձկնորս մէ՛, ժողովուրդի զաւակ մը՝ իւր հայրը պահանջ ունի հարուստ վաճառականէ մը, մեռած է հայրն եւ այժմ որդին կուգայ խնդրել հա-րուստ վաճառական Արուսթիւնէն այդ փողերիկ գումարն որով պիտի ամուսնացնէ իւր քոյ-րը : Վաճառականը կ'ուրանայ եւ մինչեւ իսկ ի բանտ դրկել կուտայ խեղճ ձկնորսն : անդ պիտի մըլէր եթէ ուրիշ մի ձկնորս չի բերէր պարտամուրհակն որ իւր քով պա-հեստի տրուած էր : Թատերախաղը մէկ ծայրէ միւս ծայրը խեղճ ժողովուրդի մը մեղամաղձութիւնը կը պատկերացնէ : Պէ-պօ այդ մեղամաղձիկ ժողովուրդի բուն ներկայացուցիչն է : Չմէկեան կը ներկայա-ցնէ այդ պատկերը ճիշդ այնպէս ինչպէս բանաստեղծը տեսնացած է : «Յօ տարեկան, թուխ եւ գեղեցիկ դէմքով, բարձր հասա-կով, ամուր կազմուածքով եւ լայն կուրծ-քով : Սեւ կարճ մազեր բերած ճակատի

վերայ, բարակ յօնքեր եւ բիւրեր, երեսն ամիլածոն Այգալէս երեւակայած էր առաջին անգամ Սունդուկեանց Պէպօն, եւ այգալէս մնացած է միշտ:

Պէպօն նուիրուած է Պ. Չմկեանի Սունդուկեանցի խաղերուն վրայ արդէն յօգուած մը պատրաստելու հետամուտ եմ. այժմ երկար կը լինի խօսիլ. բայց Պէպօն մի քանի խօսքերն առաջ կը բերեմ ցոյց տալու համար թէ՛ որպիսի՛ իրական կեանքէ՛ տունուած է: Միայն թէ ո՞վ պիտի կրնայ նկարագրել գերասանին հոգեշարժ շեշտերը, տըխուր ձայնը, սարսաղ խօսքի տրամուծիւնը: Արուծին չուզեր տալ իւր պարտքը, Պէպօն խեղճուկ քոյրն ետ պիտի ընեն նշանածէն. յուսահատ Պէպօն ինքն իրեն կը մենասօսէ, տխուր տեսարանէ մը վերջ:

«Գնա՛, Պէպօ, գեղին լզէ՛, խալիսի վուտներուն պաշ արա՛, նրանց վուտի ցիւրը լիէ՛: Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարթնահասարակ իս դուն, ի՞նչ անուամ ունիս դուն. եւիօր գուզին վուտի տակը կու գցին քեզ, վրէտ կու ման գան, գեղնի հետ կու հաւարին. ի՞նչ հաջաթ, չխանձվէի վրայ ինչո՞վ իս աւել: Գուն խօ մարթ չիս. մարթկերանց համա կերակուր է ըստեղծի քեզ Աստուծ: Գիշիր չարչրվի, ցերեկ չարչրվի, երգնքի տակը լուսացրու, անձրվի ու քամու հետ կիսի դու՛, ձմեռը ցրտէմէն կօնկօռնա՛. ամառը արեգագի շուքումն էրվի՛ ու խորվի՛. դնա՛ էնէնց մէ թիբայ հաց ճարէ ու էն թիբայ հացով դէգիտ ու քվիրըգ պահի. . . էս ի՛նչ, ի՛նչ մարթութիւն. . . էսէնց շունն էլ է ճարում մէ թիբայ, վուր տունը պահում է, մի թամ դուն էլ շուն իս. քանի աշխրթն էրեւին ման իս գալի, դուն էլ շուն պէս կերակրվի. էս ի՛նչ մարդութիւն է: Մարթ էիր ուզում դառնա՞, կէհէիր մարթիբ կու թալէիր, գուզութիւն կօնէիր, իմ նման խղճերուն կու գրնէիր, քսան ու հինգ հազար տեղ արէն արտըսունը կու թափել տէիր, էն արտըսունքերը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ տնիր. մէջը փառաւոր ման կու քէիր. դրօշկա, կալաակա, ձիաներ կու սարգէիր, քսան ու հինգ ինձ՝ պէսին գլխիդ զարաւալ կու կանգնեցնէիր. ա՛յ, էն չախը կօսէի քեզ մարթ իս, Պէպօ, ինչ մարթուն պիտի. ի՛նչ քէփըտ գուզէր էն սահաթին կու ճարէիր. էն չախը դիփունքը քեզ գլուխ կու տէին, կու մեծքին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլուխ կու կտրէին, վուր քու աչքը նրանց վրայ քախցըր ըլիս»:

Միթէ՛ «իրական կեանքի պատկեր» մը չէ՞, պատկեր ոչ միայն սեփական Ռուսահայոց, այլ նաեւ Թրքահայոց: Եթէ Պոլսեցի հայ թատերագուին ալ ուզէ թատերաբեմին վրայ հանել մեր Արուծիւնները, չեմ կարծեր որ միջման մէջ ետ մնանք: Գեռ երէկ երբ կը խօսակցէինք Պէպօի վրայ, մի երիտասարդ որուն ընտանիքը զոհ եղած է միոյն անոնցմէ՝ ոյք իրենց տան հիմերը գրած են «թափել տուած արիւն արցունքի փողերէն», պատմեց հետեւեալն որ վէպի մը սքանչելի նիւթ կը լինի:

Խեղճ գործաւոր մը կը ներկայանայ իւր մեծաւորին եւ կը պաղատի գթալ իրեն եւ տալ իրեն մի քանի հարիւր դահեկան պահանջը, յետին ծայր թշուառութեան մէջ է: Մեծաւորն որ ոչ միոյն պահանջը վճարած է, կեանքին մէջ առաջին անգամ լինելով գթութեան զգացում մը կ'ունենայ: Կը հանէ կուտայ ստակը: Գործաւորը տիրջմէն աւելի ապշած կը մնայ, եւ չգիտնալով ինչ ընելը, գլուխը կը բանայ եւ կ'ըս-

կըսի օրհնութիւններ տեղալ իւր տիրջը: Զայս տեսելով մեծաւորը կ'ըսէ.

—Աղբա՛ր, սա բարան ինծի տուր:

Մարդը կը հանէ կուտայ, անշուշտ եւ թաղրելով որ ի փոխարէն օրհնութեանցն՝ աւելին պիտի տայ: Բայց մեր մեծաւորն ստակը ձեռքն անցունելէ վերջ կ'ըսէ.

—Հիմա կորսուէ՛ դնա: Պէ հէքէք, ես այնչափ տարի ա՛նէծը լած եմ, այս փարայներս անէծքով դիզած եմ: Անէծքը ինծի «աղբ» կուգայ: Հիմա՛ դուն ելեր ինծի օրհնութիւն կուտաս որ տօնն աւրուի:

Ալ խեղճ գործաւորն յիմարի պէս չուարած ինչ ըսելը չգիտնալով դուրս կ'ելնէ:

Այս մանրամասն գուցէ այն միակ բանալին է որով կարելի է թափանցել կարգ մը Հայոց հարստութեան գաղտնեաց:

Ինչ եւ է, թողունք օտկեղծիկ ոճիրներն որ դաս մը Հայոց մէջ միութեան եւ համերաշխութեան կապն են, եւ դառնանք Պոլսոյ մեր գրական յիշատակներուն ոյք մեղ զուարթութիւն չպիտի պատճառեն: Մինչ Չմկեանի առաջ Ռուսը եւ Վրացիը կը մոռնան ազգայնութեան ու կրօնից ամէն խտրութիւններ, եւ եղբայրական համբոյններով կը համալուրեն հայ դերասանը, մինչ ամբողջ Կովկաս եւ Արարատ ցնծութեան ձայներ կը բարձրացնէ, սոցիալ խեղճ Տիկ. Արուսեակը տառապեալ անոք անօգնական կը թափախի Աղբային ժողովը վերջին նստին էր. երբ մէկ կողմ կատակերգութիւններ կը կատարուէին, անգին, Պատրիարքարանի սանդուղներու վրայ, հանգիւտեցայ մեծահամբաւ դերասանուհւոյն, որ գեղազիր մը ի ձեռին կ'աղաչէր որ Պատրիարքարանէն ձրի շինել տան: Որպիսի՛ հակադրութիւն մեր եւ Ռուսահայոց միջեւ: Եւ սակայն միթէ տիկին Արուսեակ հայ դերասանութեան ստեղծիչը չէ՞. նորա փառաց օրերը մենք չենք յիշեր, բայց խուլ արձագանգ մը կը հասնի մեզ: Եւ յետոյ ամբողջ պատմութիւն մ'է Գալիսի պատմութիւնն որ աւելի իրականութեան կը մօտենայ: Ծառերը կ'ըսէին յիմար է այդ կինը: Մինչեւ այն օրը հետը խօսելու առիթ չէի ունեցած, բայց տեսայ թէ բաւական պայծառ է միտքը: Մեր ներկայ գործիչներու վրայ ինչքան վճիռներ արձակեց վկայ գոչելով նոյա երիտասարդութիւն, եւ ի՞նչ ծածկեմ, եթէ այդ գէմքերու գիմակներու ետեւէն նայինք, չեմ կարծեր թէ տիկին Արուսեակի իրաւունք չտանք: Անցեալէն մի քանի անուն միայն կը յիշեմ անխառն հրճուանք, իբր ideal սիրահարներ գեղարուեստից. Մկրտիչ Պէշիկ-թաշեան, Սրապիոն Հէքիմեան, Յովհաննէս Սաղաթ, Թովմաս Թէրզեան: Միշտադ յիշատակներու մէջ այս անունները միայն լուսաւոր կէտեր են իրեն համար:

Լուսաւոր թէ մութ կէտեր, որքան կ'ուզենք այդ յիշատակներն արձանադրուած տեսնել. համբաւաւոր թուականներ այնքան հարուստ դէպքերով ու անձերով, բայց ո՞ր են յիշատակարաններն. բանաստեղծ, դերասան, գեղարուեստից սիրող, ամէն ոք կ'անցնի կ'երթայ առանց գրելու իւր յիշատակարանը: Մի քանի տարի եւս եւ 1860ի սերունդին եւ նորա գործող վրայ աւելի քիչ տեղեկութիւն պիտի մնայ մեզ քան Հայկի եւ Բելի ժամանակաց վրայ: Մոռացութեան պիտի դատապարտուին նաեւ Սահմանադրութեան առաջին օրե-

րու եւ տարեդարձներու յիշատակներն. յիշատակներ յոյսերու, յիշատակներ ազգային ոգեւորութեան: Երբ երբ թերեւս մեզ պահպանեն այդ օրերու ազատ պատկեր մը: Սիրոյ, եղբայրութեան, հաւատոյ ներշնչումներն եղող այդ երգերը մի քառորդ դար վերջ տակաւին այսօր հուր կուտան մեր սրտերուն, ժպիտ մեր երեսներուն: Այժմ մենք այլ եւս ո՛չ սիրտ ունինք ո՛չ ոգի. թէպէտ անցեալի վրայ ողբալն ժողովուրդի մը անկման ակներեւ ապացոյցն է եւ չենք ուզեր որոնել անցեալը սակայն ո՛չ ապաքէն մեր լաւագոյն հրճուանքը դեռ անցեալէն կուգայ մեզ: Միթէ անցեալ կիրակի Մայիս 24ին լուսեցա՞ւ երգ մը, երգ հրաժորան, թարգման նոր սերունդի հոգւոյն ու զգացմանց: Եւ ի՞նչպէս երգ է նոր սերունդը: Օրուան իմաստութիւնը մեռելութիւնն է: Դպրոցի հայ աղջիկն ու հայ տղայն խառնակա՞ն եւ չքահայեաց՞ համար ուելու համար պէտք է մահացնեն իրեն սրտերը: Մտիւրն ու մրցանակներն նոնց համար են որ կ'երգեն «Ան ծնն Քնն Անկնն Քնն»:

Եւ սակայն ժողովուրդ մը առանց ազգային երգի, առանց ազգային բանաստեղծութեան ապաւեր գալտ մ'է առանց գալարեաց, առանց թոշնոց. ոչ մի սիր կը հանգչի ի նմա. ժողովուրդ մը երգը կ'ապրի: Եւ իրիւր լեռնականաց աւանդութիւն մը կը պատմէ ազգային երաժշտութեան հրաշալիքները:

Ռօտայիցա Իլլիրիոյ մի դիւցազն է. պատերազմի դաշտի վրայ թշնամեաց ձեռքերի կ'իյնայ. ազատելու համար ինքզինք մեռած կը ձեւացնէ: Թշնամիք կրակ վառեն նորա կուրծքին վրայ, Ռօտայիցան շարժ կը մնայ. արեգակէն գրգռուած մը կը սահեցնեն ծիծերուն տակ, քամ կը մխեն եղունգներուն ներքեւ, ժարժ է Ռօտայիցա գերդ քար մը: Յայ ժամ անդ կը բերեն Հայկունա, Զարայի մենէն գեղեցիկ աղջիկն: Եւ պարելով կ'երգէ Հայկունա Իլլիրիոյ ազգային երգն, Ռօտայիցայի գէմքին վրայ, ի լուր հայրենեղանակներու ժպիտը կ'սկսի երեւիլ: Սոստանգեալ դիւցազն աչքերը կ'սկսի բանալ եւ պարուհին երբ կը սուրայ, իւր վերաբերու կը նետէ անոր վրայ եւ կը ծածկէ դէմքը: Սրտայոյզ աւանդութիւն, որ կը յայտնէ թամէն տառապանաց կարելի է անտարբէ մնալ բայց ո՛չ հայրենի նուազներուն:

Եւ ո՛չ ապաքէն քառասուն դարեր յետոյ տակաւին մեր բաւառանց արձագանքներու խուլ ձայները կը հնչեն մեր սրտերու խորը: Ո՛չ ապաքէն եկեղեցին իւր երգերովն զմեզ կը կապէ հազար հինգ հարիւր տարիներու հետ. եւ եկեղեցւոյ ամէն մի երգն հայ մարտիրոսի մը հառաչանքն է մեզ հրաւէր կը կարգայ հաւատաւոր:

Խեղճ երգեր, այժմ հաւածական ու տարանդի, ո՞վ պիտի պատմէ այն ամեն ներշնչումները զոր դուք ազգած էք ժողովուրդին, ո՞վ պիտի պրպտէ հայրենեաց ամէն անկիւններն ինչպէս դուք հսկէք հայութեան պահպանման:

Գեռ երէկ կը լսէինք թէ Ռուսիոյ խորքէն գունդագունդ Ռուս գողթակներ կը դիմեն յԱրարիսի ափունս դրաւելու: Եւ յոյ գաղտերը, Երբ տխուրութեամբ կը լսուէինք այս տխուր լուրին վրայ, իբր թափառութեամբ — որովհետեւ միշտ միսթարակ մը պէտք է — ըսի թէ՛ մեր միակ յոյժը մագրելու համար ռուս գողթակներն պէտք է որ երգերը միայն համարուին: — Ինչպէս:

Գնացած էր Գեղամայ լճին եղերքն. առաջին անգամ անդ բարձրացող հայուն ոսկորներուն մէջ սարսուռ կ'ընթանայ. անհնարին է որ հայու մը սիրտը չզեղու. եւ ահա՛ խոր լռութեան մէջ լճին եւ դաշտերուն բոլորտիքը կը նշմարուին տափունչ, դեղին ուռու մալականներն, ուռու կառավարութեան նուէրները. անհուն տխրութեամբ մը կը համակի հայուն սիրտը, բայց հաւատա՞յ, ուռու շնչերով հայ երգեր են որ կը բաղկան իւր ակունքին եւ Պոլսեցի մը կրնայ որոշել «Արիք հայկազունքն» իսկ որ իբր արժանաբէ ծաղկ Ռուսաց զինուորներու երաժշտութեան մէջ ընդունուած է:

Եւ սիրենք երգերը, գուրգուրանք անոնց վրայ, զի եթէ քնարն ու դաշնակ աշխարհաբազարացի են, երգը եսական է, ազգային է: «Թողովուրդի մը ճամբարի երգը իւր թափած արցունքներովը շինուած է» եւ ո՞ր ազգ մեզի մէջ առկա արցունքներ թափած է:

Սակայն խոստովանինք թէ երգն զմեզ բաւական հեռու տարաւ եւ անոր հովանւոյն ներքեւ խօսեցանք միշտ կենդանութեան վրայ, մոռնալով թէ յառու Յ+Յ+Յի հրամանը մեռելութիւնը միայն պաշտել է. ուրեմն քիչ մ'ալ այդ կենդանութեան հաճոյ լինելու համար խօսինք մեռելաց վրայ, բայց կը խոստովանիմ թէ մտքի մէջ մտածած գաղափարէն շատ հեռանալ կարելի չստիպի լինի:

Ուրեմն մաքերնիս բերելով թէ ժողովուրդները պանդխտութեան մէջ ուշ թէ կանգնալ կը մեռնին, արդեօք չե՞նք ուզեր գիտնալ թէ ի՞նչ տապանագիր կրնայ անոնց յիշատակը — գէթ ժամանակի մը համար — կենդանի պահել: Օտար քաղաքներու մէջ ցրուած հայերն այդ տապանագրին կարօտ են: Ոմանց համազմամբ ժողովուրդ մը որ կ'ուզէ երկար յիշատակ մը թողուլ այն երկրին մէջ ուստից կ'անցնի պէտք է այժ տայ իւր ազգային կերակրոց: Ահա, եկեղեցի, երգ ամէն ինչ վաղաթաղամ է, կերակուրն է միայն որ ժողովուրդի մը յիշատակն երկար առեն կը պահպանէ: Գէթ փորձը մենք ըրած ենք: Օր մը կը խօսակցէի Բոլորիացի բարեկամի մը հետ, Բոլորիոյ կորսուած Հայոց վրայ:

— Այո՛, ըսաւ, կան շատ մը ընտանիքներ որոց նախնիքը գիտենք թէ հայ էին, իրենք ալ գիտեն, թէ պէտ շատ սերունդներ անցած են: Տեսակ մը կերակուրներ կան, յարեց, որոնք որ տուններու մէջ եփուին, ցոյց կուտան թէ այդ տուններու նախնիք հայ են: սերունդէ սերունդ այդ կերակուրները մը նացած են:

Հետաքրքիր էի խմանալ թէ ի՞նչ կերակուրներ են. բացատրեց. հասկցայ «բալա եւ ռեհա» Բեքէ:

— Հարուստ թէ աղքատ որ տան մէջ որ այդ կերակուրները կը պատրաստուին, անտարակոյս հայ մը եղած է այդ ընտանեաց նախահայրն:

Բայց օտար քաղաքներու հայը այժմ — միշտ ընդհանուր ցնցումէն — շատ տըրտաւոր չեն միայն տապանագիր մը թողուլ, այլ կ'ուզեն եւ կ'աշխատին սարկի իբր հայ, առանց իրենց յոյսն ու հաւատքը մոռնալու: Միթէ այս հոգւոյ նշանակ մը չէ՞ այն անաթերթի զոր կ'ընէ «Հայաբազար» հայը կը հրատարակեն, մաճառ տառով մաճառ լեզուաւ, այլ հայ անունով, հայ ոգւով: Արժեքաւ, այդ անունն է զոր իբր թե.

բառի հայրենի միասին կը տանին ուր որ պանդխտեն:

Ահ, անուան մը դիւթական ազգեցութիւնն: Եկեղարական ցնցում մ'է որ ամենէն աւելի թմրած մարմնոյն կենդանութիւն կը պարգեւէ: Ազգութեան մը անհաշտ թշնամիներն են որ իրենց զէնքերը կը գործածեն խորտակելու, սպաննելու ազգային անուններն, ազգային յիշատակներն: Ամէն իշխանութիւն, աշխարհական թէ եկեղեցական, երբ իւր շահուց հակառակ կը գտնէ ազգութեան մը գոյութիւնը, բոլոր զօրութեամբ անուններու եւ յիշատակներու դէմ կը մարտնչի: Կրօնական իշխանութիւն մ'է Հըռուս եւ պէտք էր յիշել թէ քրիստոնէութիւնը բաւական պարտական է հայ անուն, եւ սակայն այդ Հոսմն ալ յիշակալութեան ոգի մը ունի այն սակաւաթիւ Հայոց դէմ որք իւր հովանոյն ներքեւ կ'ընտան են: Վերջերս Հոսմէն վերագառնալով Ազգութեան Պատրիարք կը հանդիպէր Վիէննա ուր կը ձեռնադրէր եպիսկոպոս Միսիթարեանց Արքայ Հայր Այառնեանը: Ամէն կաթոլիկ եպիսկոպոս վիճակի մը առաջնորդութեան փառաբան պիտի կրէ եւ Միսիթարեան եպիսկոպոս մը — մանաւանդ երբ Այառնեան մ'է — հայ թեմի մը անունը կրելու իղձն ու իրաւունքը կը վայելէ. բայց Հոսմ կ'ուզէ որ հայութեան հետ կապերն ամրապնդ չլինին եւ Այառնեան կ'ընտրուի Արքեպիսկոպոս Սաղաթնայէ (ո՛ր գլխաւէ գուցէ ի հրապարակաց չէ դիմացեր Հոսմ):

Եւ վերեւոյ Միսիթարեանը, իրենց առանց ութիւնն էր իրենց եպիսկոպոսներու գրողներու վրայ հայ անուն մը գնել: Սիւնեաց, Երեւան, Արքեպիսկոպոսներ էին Միսիթարեանը, իսկ այժմ Միսիթարեանց Արքեպիսկոպոս Տրապիզոնացի բարձրակի անունն ենք: Կիտի ծածկէ իւր սրտին դառնութիւնը:

Եւ այդ առաջին դառնութիւնը չէ զոր կ'ուզենան Միսիթարեանը. անփոփոխելի է Հոսմ, ինչպէս անփոփոխելի են ազգութեանց թշնամիներն: Կը լինեմ գէպը մը որ միշտ տխուր յիշատակ մը թողած է սրտին մէջ: 68 թուականին երբ Վերեւոյի Ռափայէլեան վարժարանն աշակերտ էի, ամբողջ մի երեկոյ մեր սրահէն պարտիզին մէջ կ'ընտան Վ. Պիլան. կը ձեռնէինք, կը խօսակցէինք. երկու եկեղեցականք կան որոց դէմքը նայելով երբեք հայ մը չկրնար յազնալ: Խորիւն են Սիւնեաց: Մեր պատանեկութեան օրերու ամենէն մեծ հրեւոյնքն էր մեր տեսուչն որ ոչ միայն մեծ հայրենասէր մ'է, մեծ միտք մը, այլ նաեւ մեծ սուրբ մը: Այդ երեկոյ Վ. Պիլանի գէմբին վրայ արտաքին կարգի տնտեսութիւն մը կար. չկրցաւ դիմանալ սիրտը բացաւ մեզ. երկու երեք ընկերներ էինք — կը յիշենք արդեօք —:

Պիլա Հասունեանց եւ Հակոբասունեանց կիւնները կային եւ Հոսմ իւր խնդրութիւններն ի գործ կը դնէր ընդդէմ Վերեւոյի Միսիթարեանց: Պիլան հաղորդուած է ի Հոսմ թէ Հոսմայ դէմ ազգատամներու պարագլուխները Ռափայէլեան եւ Մուրատեան վարժարաններու աշակերտներն են: Միսիթարեանը փոխանակ կ'ընտանք աշակերտներ տալու ազգին հայրենասէր աշակերտներ կուտային. ոճիր մ'էր այս: Եւ Հոսմ կը հրամայէր Միսիթարեանց

որ այլ եւս իրենց աշակերտներուն ազգութեան եւ հայրենասիրութեան յորդորներ չտան:

Կը խոցէր այդ հրամանն Ալիշանի սիրտն. ի՞նչ մոռածութիւններ պաշարեցին իւր միտքն: Իսկ մենք թեթեւ ժպիտ մը ունեցանք: Ասարիկ Ալիշանի հետ, ծծել անոր հետ մի եւ նոյն օդն եւ անտարբեր հայ լինիլ. այդ երթագրելը պարզապէս տխրութիւն էր: Հասունն ալ անցաւ, Պիլան ալ անցաւ, շատերն ալ անցան եւ Ալիշան կը մնայ միշտ հայութեան համար: Իւ շատ հեռու չէ այն օր, 1890ին, ուր պիտի կարենանք, յուսանք եւ մաղթենք, տօնել հայութեան այդ սիրելի անուան յիշատակի յորեկանն:

Եւ այդ օրէն յետոյ պիտի դայ տիեզերաց մէջ աննման յորեկանն որուն պէտք է այժմէն պատրաստուիլ: Այս տարի օրացոյցը կը գնէ 3993 թուականն, ուրեմն դեռ եօթը տարի կայ. բայց Հայր Ալիշանի եւ հայութեան գիտնականներուն անկէ ճշգրէլ այն տարին յորում Նաւատարգի առաջին օրը պիտի տօնենք մեր ԶՈՐՍ ՀԱԶԱՐ ԱՄԵՍԿԸ:

ՀՐԱԶԴԱՆ

Պ. Գ. ԶԱՆԿԵԱՆ

«Արձագանք» կը հրատարակէ կենսագրութիւնն ռուսահայ նշանաւոր դերասան Պ. Գ. Զանկեանի, որու դերասանական ասպարէզը քսան եւ հինգ ամեակն այնքան փայլով տօնուեցաւ վերջերս ի Թիֆլիս:

Հայ հասարակութեան քաջ յայտնի է Պ. Զանկեանի անունը, քանի որ ահա վաթսուական թուականները ի վեր թիֆլիսում՝ հայ թատրոնը եւ նա այնքան սերտ կապով կապուած են եղել, որ բաժանել մէկին միւսից անկարելի է դարձած ամենիս համար: Թիֆլիսում գրեթէ ոչ ոք կայ, որ «հայ ներկայացումն» լսելիս չմտաբերէ «Զանկեան» եւ կամ «Զանկեան» ազգանունը իմանայիս, եւ կամ թէ իրան հանդիպելիս, չը մտաբերէ «հայ թատրոնը»:

Պ. Գ. Զանկեան Կարնոյ նահանգից գաղթած մի համեստ քահանայի որդի է: Տէր Զարութիւն քահանայն ամէն ջանք է գործ դրած պատրաստել իւր օրդուոցը պետական ծառայութեան համար: Ծերունի հօր իղձը իրագործվում էր, եւ մեր Պ. Գ. Զորդը, տեղւոյս երկրաշտիական գործողութեամբ տաճարում լինելով իւր ուսումը, արդէն ընկնում էր պետական ծառայութեան առաջարկւում, երբ յանկարծ, 1862 թուին, այդ յառաջագիտութիւնը ընդհատվում է ընդ միշտ մի անակնկալ զէպից: Պատահական կերպով «հայ թատրոն» բառերը անող սեփի մոլեթեամբ յափշտակում են 23 ամեայ աշխարհ երիտասարդի միտքը, ուղղութիւնը, կեանքը, եւ նա այնուհետեւ գնում է իւր կեանքի ասպարէզը, բոլոր ազգայն մի գործի, որ մինչեւ այսօր էլ կատարեալ հաստատութիւն չէ ստացել մեր մէջ:

Այս իրողութիւնը պատահում է այն միջոցներին, երբ հայերէն թատրոնական ներկայացումները լինում էին տարէնը մի երկու երեք անգամ, երբ բեմը եւ գործը այնքան արհամարքուած էին, որ իրական սեփի դերերը պիտի կատարէին ձեւափոխուած երիտասարդներ եւ երբ պերասանութիւնը յանձն էին առնում մի միայն ուսանողները եւ այն աղքատ տղայքը, որոնք տակաւին ոչինչ կորցնելու դիրք չուէին կեանքի մէջ:

Ահա մի այդպիսի ժամանակում, երկրաշարժի աստիճանաւոր Չմկեանի մէջ վառվում է այն սէրը զէպի հայ թատրոնը, որ միանգամայն յեղափոխում է նորա կենաց ուղղութիւնը եւ ձգտումները: Գուցէ, եթէ մի փառքի, պատուի հասած զօրապետ ցանկանայ դառնալ կուսակրօն-անապատական, այն զարմանքը չի յառաջ բերիլ ինչ ապաւորութիւն որ ունեցաւ տեղային մեր երիտասարդութեան վերայ, երբ մի օր յայտնուեցաւ, որ աստիճանաւոր Չմկեանը թողել է պետական ծառայութիւնը լո՛ւ հայ թատրոնին ծառայելու համար: Այս եղելութիւնը աւելի եւս զարմանալի էր, որ ոչ Պ. Չմկեանը իր ուսմամբ եւ հայերէնի հմտութեամբ տարաբար էր այդպիսի զօհաբերութեան, եւ ոչ նորա բնորոշ գործունէր որ եւ է մի բան խոստացող ապագայ: Եւ մինչդեռ Պ. Չմկեանի այս վրձնական քայլը գործնական մարդկանց աչքում ինքնասպանութեան հաւասար էր համարում, հասարակութեան համար իր ըզզալի օգուտը ունեցաւ . . .

Այսօր ալ մէջքը կոտորած, հոգեւորից բեռնաւորութեամբ Գէորգը նոյնը չէր մի քստն, քստն եւ հինգ տարի առաջ: Բեմի համար յաջող հասակը, վեհանձն ու խորհուրդէմբը, աշխոյժ հոգին, տոկոսն բնաւորութիւնը եւ միշտ աղնիւ ձգտումները՝ իւր ժամանակին երիտասարդ դերասանին այն փայլէին տալիս, որ գուցէ մեր պատահեաց շատերի համար էլ գրաւիչ թուալով՝ թեւադրեց որոյա եւս չեղալի: Կենսական միւս ասպարէզները հայ թատրոնի կենդանութեան փշալից ասպարիզում:

Այդպէս ահա 1862 թուականից սկսեցաւ Պ. Գ. Չմկեանի գործունէութիւնը: Նկարագրել նորա վերջի 25 տարուայ կեանքը, ասել է գրել Թիֆլիսի հայ թատրոնի պատմութիւնը, որ առ այժմ մեր նպատակից դուրս է: Բայց անկարելի է չլինել այստեղ, որ այդ 25 տարուայ մէջ նորա անունը միշտ կապուած է եղել այն ամեն մի քայլի հետ, որի նպատակն է եղել մեր բեմի յառաջդիմութիւնը:

Նոյն իսկ ակդրից՝ Պ. Չմկեանը պարագլուխ դարձաւ «սիրողներին» այն խումբին, որ առաջինը սկսեց շարունակ ներկայացումներ տալ քաղաքիս մեծ թատրոնում:

Նա եղաւ կուսակից եւ գրգռող թարգմանական խաղերի ներկայացման:

Նորա օգնութեամբ է գրուած Պ. Գ. Սունդուկեանի անդրանիկ «Թաթարաւայ» խաղը: Նա իրադործեց բեմի վերայ եւ մինչեւ այժմ իր սեփականութիւն պահում է իրան նոյն Պ. Սունդուկեանի «Պէպոն»:

Նորա խաղը աչքի առաջ ունենալով, գրուեցին կամ թարգմանուեցին մեր ունեցած թատերական գրութիւններից շատերը: Նորա մասնակցութեամբ տրուեցան այն բարեգործական նպատակաւ նշանակուած ներկայացումները, որոնց մէջ դեր կատարողները պատկանում էին քաղաքիս ամենապատուական ընտանիքներին:

Նա, իւր ընկերներով հանդերձ, առաջինը շրջեց գաւառներում եւ, «Տիրոջ խօսքը» տարածող մոլեռանդ միսիօնարի նման, իւր ներկայացումներով ամեն տեղ ֆանաց «թատրոնական գաղափարը» տարածել:

Նա ուղարկուեցաւ Պոլիս՝ առաջիւ հրաւերել կարգալու այնտեղի խումբին:

Նա միայնակ եղաւ, որ Փոքի եւ միւս պարբերական հրատարակութեանց մէջ ներկայ մի շարք յօդուածներ հայ թատրոնի պատմութեանը:

Նա իւր անձնութեամբ եւ իւր եւանդով միշտ ջանաց բարձր պահել իւր ընտրած ու պաշտած խաչակրութեան դրօշակը:

Եւ քանի՞ցս անգամ տուեց նա այս ասպարիզում թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս . . . : Որքան պատերազմել է նա 25 տարուայ մէջ ամէն տեսակ խոչնդոտների հետ, որոնցից անբաժան է եղել հայ թատրոնը, կամ որքան արիւն է պղտորել նա թէ իրան եւ թէ այլոց . . . :

Բայց իբրեւ ապացոյց, թէ որ աստիճանի անկեղծ է Պ. Գ. Չմկեանի սէրը դէպի հայ բեմը, ներում ենք մեզ մատնացոյց անել, որ պարոնը իւր կենաց ընկեր, իւր ուրախութեան եւ տրտմութեան բաժանող, ընտրած է նոյն չափով բեմին անձնուէր տիկին Յզիսաբէթին (Սաթենիկ), որ այս գործում եւս իւր սիրելի ամուսնոյ հետ կազմում է «մի հոգի եւ մի մարմին, զոր Աստուած զուգեաց», իսկ իւր սիրոյ եւ համերաշխութեան մէջ ոչ ոք կարող է նոցա մեկնել:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ

Առողջարանութիւն ուսանողաց. — Չափազանց աշխատութեան եւ նստողական կեանքի փութներն եւ առողջապահական միջոցները:

Փարիզի բժշկական ակադեմիան նշանաւոր առողջարաններէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմած էր ուսանողներէ համար սա խնդիրը թէ զպրօններու մէջ չափազանց աշխատութիւնն ինչ աղքատութիւն ունի տղայոց վրայ: Յանձնաժողովը կատարած լինելով զիւր պաշտօն, հետեւեալ տեղեկագիրը մատուցած է ձեռամբ Պ. Լանեսօի:

Տեղեկագրին մէջ նախ կը խօսուի այն հիւանդութեանց վրայ՝ որոց ենթակայ կը լինին զպրօնականը չափազանց աշխատութեամբ եւ նստողական կեանք անցունելով:

Տղայ մը երբ նոր կ'սկսի դպրոց երթալ, կարճատեսութիւնն ըսուած բանը չունի բնաւ. բացառութիւն կը կազմեն անոնք, որք ի բնէ կարճատես եւս: Բայց երբ կ'սկսի պարապիլ անընդհատ գրելու եւ կարդալու՝ հետզհետէ կարճատես լինելու կ'սկսի: Վասն որոյ ուսանողը քանի յառաջագիմեն իրենց ուսմանց մէջ եւ բարձրագոյն կարգերու ելնեն մասնաւոր դպրոցներու մէջ, կարճատեսութիւնն ալ այնչափ կը շատնայ անոնց մէջ:

Մանչերը մանաւանդ վեցէն մինչեւ տասն եւ չորս տարեկան աղջիկներն երկար ժամանակ առանց յենարանի նստած մնալով, նաեւ տեսակ մը զիր գրելու եղանակին բերմամբ ալ թիկունքը ձախէն աւելի կարկառելով, ուսանողաց օսկորները կը ծօրն, աւազանը (bassin) կը թիւրի, սղնայարը կը կորանայ, կուրծքը կը ցցուի, ուսերուն մէկը միւսէն բարձր կը մնայ, աջ անդակէն (clavicule) ցցուած մասը ձախէն աւելի շատ կ'ըլլայ:

Ուսանողը երկար ժամանակ ծածկմանով գրասեղանի մը վրայ եւ տնարի կենտրոնով դասի եւ խորհրդածութեան ժամանակ այնպիսի սրահներու մէջ՝ որոնք ըստ բաւականին օգուտէն չեն, կ'ուսնեան ստամոքսի ցաւեր, մարսողական դժուարութիւններ, անբաւական անդառութիւն (անսուա-

ղութիւն), գունատութիւն եւ արեան արեւաթիւն:

Թոքախտն՝ որ այնքան յաճախակի կը տեսնուի քաղաքաց նստողական կեանք անցնող բնակչաց ըով, յաճախագոյն եւս եւրեան կուգայ մեր յոյժ աշխատասէր պատանեաց ըով որք զրեթէ միշտ ծածկուին զբաւեղանին վրայ անկատար կերպով չունչ կ'առնուն եւ օդը թերի կերպով կը թափանցէ նոցա թոքերուն խորաց մէջ:

Ուսանողաց խելքն ու միտքը կանխաւ կաշկանդուելով եւ տարապայման ու երկարատեւ աշխատութեամբ յոգնելով, ենթակայ կը լինին ջղային անհանգստութեանց՝ որոնք թեթեւ կամ ծանր, վաղանցուկ կամ երկարատեւ կրնան լինիլ, զըլլուեցաւ, զերբագրագութեան, ջղային տկարութեան, մտաւոր դանդաղութեան եւ ուղեղի գործութեանց խանգարման: Ասոնց ենթակայ կը լինին մանաւանդ այն երիտասարդք՝ որոնք միջման կը մտնեն, մասնաւոր զպրօնաց աշակերտք, զաստիարակը եւ զաստիարակուհիք:

Տեղեկագրին երկրորդ մասը կը պարզէ առողջարանական պէտք եղած միջոցներն: Որչափ որ կարելի է, պէտք է ներքին աշակերտաց տեղ արտաքին աշակերտներ ընդունիլ որովհետեւ արտաքինէն աւելի ներքին ենթակայ է ննջարանի մէջ մարդոց բազմութեան առաջ եկող օդին ապակառնութեան, նստողական կեանքի, դասի ժամանակ եւ երկար խորհրդածութեանց ատեն մարմնոյ անշարժ մնալուն:

Գունը տղայոց համար աւելի երկարատեւ պէտք է լինի քան պատանեաց՝ որոնք ութ ժամէն պակաս քնանալու չեն, վառն զի ուղեղը մասնաւոր աշխատութեամբ յոյնած լինելով հանդիստ լինելու պէտք ունի:

Մասաւոր աշխատութեան հանապազօրեայ տեսողութիւնն, ութ տարեկանէն մինչեւ քսան տարեկան, տարիքին համեմատ աճելու պայմանով երեքէն մինչեւ ութ ժամն անցնելու չէ:

Մասաւոր աշխատութիւնը պէտք է ընդհատուի զբօսանքով, խաղերով, երգերով: Գաւառութեան ժամանակը պզտիկ տղայոց համար քսան էն մինչեւ երեսուն վայրկեան ըլլալու է եւ պատանեաց համար ժամ մը կամ քաւորդ մը աւելին անցնելու չէ:

Գաւառութեան եւ խորհրդածութեան կամ տան սերտողութեան համար մասաւոր աշխատութիւնն, ըստ տիոց, երեքէն մինչեւ ութ ժամէն պակասի վերածելու համար պէտք է մանաւանդ նուազեցնել տան սերտողութիւններն՝ որոնք աւելի անշարժութեան կը մասնեն զուսանողս:

Ուսուցման յատկապէիծը պէտք է վերածուիլ համեմատաբար ժամանակին որ տրուած է մասաւոր աշխատութեան համար:

Ոչ միայն քննութեանց յատկապէս բուն սահմանը պէտք է սեղմուիլ, այլ եւ ընդհանուր, համայնագիտակ քննութեանց տեղ՝ որոնք յոգնեցուցիչ մտաւոր աշխատութիւն մը կը պահանջեն, պէտք է հաստատուի մասնաւոր քննութիւններ՝ որոնք ստէպ ստէպ կը կատարուին եւ կը կանոնաւորեն աշխատութիւնն, իմացականութեան ժամանակ թողլով մարտնչու այս բազմազան ծանօթութիւններն որոնք յաջորդաբար կ'ուսնուին:

Գունի, կերակուրի, մտաւոր աշխատութեան համար տրուած ժամերէն դուրս ըստ տիոց, տասնէն մինչեւ վեց ժամ պէտք

է սահմանուիլ ամեն օր խաղի, երգի, պը-
տոյտի եւայլն: Բայց ասոնց համար ուսա-
նողք պէտք է ունենան միջոց եւ ազատու-
թիւն:

Եզրակացութիւն. — Բժշկական Ակա-
դեմիան կառավարութեան ուղղութիւնը
կը հրաւիրէ այն տխուր ծանր հետեւա-
նաց վրայ՝ որք զպրօցներու, լիկտներու
եւ մասնաւոր զպրօցներու մէջ ուսանողաց
չափազանց աշխատելէն եւ նստողական
կեանք անցունելէն առաջ կուգան. նաեւ
արդի ընդունուած ուսուցման եղանակին
մէջ մեծ բարեփոխութիւններ մտցունելու
հարկին վրայ նշնայէս կառավարութեան
ուղղութիւնը կը հրաւիրէ:

Ինչպէս կը տեսնուի, այս տեղեկագիր
խիստ կարեւոր կէտեր կը պարունակէ, եւ
կարծէ որ մեր դպրոցաց անօրէնք եւս ու-
ղղութիւն ընեն անոր մէջ պարզուած
առողջապահական օրինաց: Թէեւ մասնա-
ւոր ըննութիւն մը ըրած չեմ, բայց կը
տեսնեմ որ, կարծատեսք, կորաքամաք,
տկարաջիղք են. կը յաճախեն մեր ուսա-
նողաց դասուն մէջ:

Եթէ այս այսպէս շարունակէ, ապագային
ուսնալ դասը կարգ մը արտաժէտներէ
միայն բաղկացեալ պիտի լինի, եւ ոչ այլ
ինչ: Յաւալի իրողութիւն մ'է այս՝ որուն
ամէն աղք աշխատելու է դարման տանիլ:

ՏՕԹԹ. Ռ. ՌՕՊԵՆՍՕՆ

ՀՐԵԱՅ ԵՒ ԶՀՈՒՏ

Յայտնի է թէ Հրեայներն ամենէ պար-
տաւելի եւ հալածեալ ազգը կը կազմեն
մանաւանդ Քրիստոնեայ աշխարհի մէջ: Ի-
րենց թագաւորութեան կործանումէն ի
վեր ծանրածանր նեղութիւն եւ հալածանք
կրած են ու կը կրեն: Կան երկիրներ, որ
թէեւ լուսաւորեալ, այնուամենայնիւ կը
չարունակեն սաստիկապէս հալածել Հրեայ-
ներն: Այս կարգին կը պատկանի Ռուսիա:
Ռուսիոյ մէջ հալածումն այն աստիճան սաս-
տիկ կը լինի, որ երբեմն հիմնայապաշտ
կործանեն բազմութիւն հրէական աւաններ,
կ'սպաննուին անթիւ Հրեայներ եւ դառն
թշուառութեան կ'ենթարկին նոցա հարիւ-
րաւոր ընտանիքներն: Այդ պարբերական
հալածման պատճառած վնասն անհունա-
պէս աղետաբեր է եղած Հրէից համար:
Ի Ռուսիոյ Հրէից հալածման նպաստած է
ուսմիկ ժողովրդեան հետ միասին եւ ուս-
ական բարձրագոյն մամուլի մի մասն: Ամ-
բոյն հալածած է զայն կրօնական մոլե-
ռանգութեան պատճառաւ. սակայն ամ-
բոյն զրդիչն եղած է առաւելապէս այդ
հրէատեաց մամուլն: Հէրատեաց մամուլն,
ի նկատ առնելով որ Հրեայք խաբեբայու-
թեամբ ու ճարտիկութեամբ իրենց ձեռքը
կ'անցունեն ուսական ազգի հարստու-
թեան ազդիւրներն, սխառ ատել այդ ժո-
ղովուրդն եւ ասիթներ որոնել ընդ հակա-
ռակն բոլորովին տկարացնելու, նիւթապէս
մեռցնելու այդ ժողովուրդն եւ գորա հա-
մար կը բաւէր միայն զրգուել ամբոյնի մո-
լեռանգութիւնը: Միւս կողմէ եւ կառա-
վարութիւնը պարբերաբար հպատակ ազ-
գաց վայելած իրաւունքներէն կը զրկէ հըր-
եայներն: Հրէատեաց կուսակցութեան կը
պատկանին Ռուսիոյ նշանաւորագոյն լրա-
դիրները Նալէ Վրէժե, Մուխոմէս Վեպ-
նաքի եւ: Սակայն կայ եւ մի այլ կուսակ-
ցութիւն, որ թէեւ հրէատէր չէ, բայց եւ

հրեայներն հալածելն ալ մարդ կային խղճի
հակառակ բան մը կը նկատէ: Այդ կու-
սակցութեան կը պատկանին Նալէքի, Ռու-
կէ Կաբէր եւ առ հասարակ ուսական բա-
րեխայն լրագիրներն որ Հրէից կողմը կը
բռնեն այն պարագային երբ միւս կու-
սակցութեան լրագիրները կը զրգուեն ամ-
բոյն Հրէից դէմ, կամ երբ ամբոյնը կը
հալածէ զայնս:

Այսպէս թէ այնպէս մասնաւորապէս
Ռուսիոյ Հրէից ունեցած մարդ կային յոռու-
թիւններն այն աստիճան պախարակելի են,
որ հրէատէր կամաւելի ճիշդն ըսելով ազա-
տական լրագիրներն իսկ չեն կարող պար-
տաւանօք չխօսիլ Հրէից վրայ եւ զորո՞ւ
օրինակները կը տեսնուին յաճախ:

Քրիստոնեայ ազգերն առ հասարակ կ'ա-
տեն Հրեայներն ջհար անուան ներքեւ:
այդ ազգեր Հրեային միայն կը վերագրեն
ջհուտական յոռութիւններն. սակայն այժմ
հրէատէր կուսակցութեան պատկանող հը-
րապարակախօսներ ոմանք կը ջնան ասա-
ցուցանել հասարակութեան որ ջհար ը-
սածն կարող է լինիլ չէ թէ միայն հրեայ
այլ եւ քրիստոնեայ, այսինքն ջհուտական
բնաւորութիւն ունին եւ շատ աշխատի առ-
հատներ, հետեւաբար այդ բնաւորութեան
համար պէտք չէ դատաւարաւել միայն հըր-
եայ ժողովուրդն: Այս մասին ահա յառաջ
կը բերեմ այստեղ նշանաւոր ուս հրապա-
րակագրի մը հետեւեալ խօսքերը.

«... Քիչ մ'ալ խօսիմք Հրէից վրայ:
Հրէատեաց չեմ բայց եւ ոչ հրէատէր, եր-
բէք հրէատէր, որովհետեւ կեանքիս մէջ
չատ զտնուած եմ Հրէից հետ եւ գործ-
նախնայապէս, կարելի է ըսել, ուսումնա-
սիրած եմ այդ խնդիրը. բայց պիտի ըսեմ
յայտնաբար եւ անկեղծօրէն: Հրեայն չէ
որ սոսկալի է ու վտանգաւոր, այլ ջհուտ,
տիպ մը որ կը բովանդակէ իւր մէջ սասա-
նութեանց կատարելութիւնը: Զհուտն ա-
ւազակի նման կը կոչուուի, կատուի պէս
զգոյ է, նապաստակի պէս՝ երկշոտ, շան
լակտի պէս՝ կուտարար, գիշակեր թռչու-
նի նման՝ ագահ եւ որկրամուլ: Սակայն ի
մէր ճշմարտութեան, պարտիմ յաւելու որ
ջհուտը կարող է լինիլ եւ ոչ հրեայ... նա
համաշխարհաբարապաշտ է, թէեւ ազ-
գայնութեան խմբատով «ապօրինածին» է
այս, իսկ բարոյական խմբատով «սրձե-
ւէզ» է: Կատեմ այսպիսի ջհուտն, ինչ կը-
րօնի եւ ազգի ալ պատկանի: Զհուտ է
նա որ ամեն բանէ վեր կը դասէ ու-
կին, որ իւր Եան վեր կը համարէ օտա-
րէն, եւ որ իւր միտքն եւ հոգին այնպէս
վարժեցուցած է որ միշտ պատրաստ է մա-
տուցանել, իրր ամենի համար հաւասարա-
պէս համեղ կերակուր... ըստ իս ջհուտ է
նա, որ խարդախ է կեանքի բոլոր շաւիղ-
ներու մէջ, որ նենգաւոր է հոգեւով եւ
խօսքով, որ կը ստէ ընդդէմ ճշմարտու-
թեան եւ որ շահախնդիր է...»: Յօդ-
ուածագիրն իւր այս վերջին տուեցով կ'ակ-
նարկէ զէպի մարդկութեան մէջի այդ յատ-
կութեանց տէր մարդիկն եւ զէպի եւ-
րոպական պետութեանց արդի զիւանա-
գէտներն, որոց — սոյն երկու կարգի եւս —
կենաց ընթացքի եւ գործունէութեան մէջ
ջհուտական ձգտումէն աղնաւորայն ձգ-
տում չտեսներ...»

Պ. Տ.

Հետեւեալը զրկուած է մեզ ի հրատա-
րակութիւն.

Պատիւ ունիմ ազգօգուտ օրաթեր-
թիդ միջոցաւ ազգ. առնել արդոյ հա-
սարակութեան թէ, Արեւելեան Տնտե-
սական Միութեան հրատարակութիւնն
եզոյ Տաթեւ ամսաթերթին Տնօրէնու-
թենէն հրաժարած եմ, մեծ դժգոհու-
թեամբ յիշեալ Միութեան Պ. Հիմնա-
դրին դէմ:

ԵՂԻԱ. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Օրթաքէօյի Ս. Լուսաւորչայ վար-
ժարանին մէջ մայիս 24ին քաջուած վի-
ճակահանութեան շահող թիւերուն
ցուցակն՝ իրենց համապատասխանող
նիւթերով՝ հետեւեալն է.

- Թիւ
1,108. Կրակարան արոյր
366. Տուփ աստեղաքար
1,891. Պրօշ մօզայիք
517. Բարձ տամասկագործ
647. Լուսանկար
930. Իւզանկար պատկեր (Արեւմուտք՝
Ճիւլանեանի)
920. Բսակ ձեռագործ
1,522. Ս. Պետրոս (մօզայիք)
680. Նէսէստէր
677. Աղապանի
1,853. Բարձ ձեռագործ
1,015. Պատկեր իւզանկերի (Ֆէնէր-Պահչէ)
1,445. Ծածկոց քրոչէ
1,915. Վզնոց քրոչէ (տանթէլ)
740. Թաղար յախճապակեայ
662. Պատկեր իւզանկերի (Ֆէնէրի Փարոսը)
1,244. Լուսանկար պատկեր
1,248. Համրիչ՝ հագիք
1,252. Բանդարամա կ. Պոլսոյ (լուսանկար
պատկեր):

Վերոյգրեալ 19 տոմսերը շահողը կը
հրաւիրուին ներկայանալ առ վարժա-
րանիս ներքին տնօրէն Եզեկիէլ Էփ.
Կարապետեան որ ստանալով շահող
տոմսակը՝ պիտի յանձնէ փոխարէն նա
յարաբերող նիւթը:

897 ՏԵՍԶ. Ս. Լ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՇԱՐԹԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԻ

Լոնտոն. 5 յունիս

Պոմպէյէ առնուած հետաքրոյ մը նա-
յելով, խռովութիւնք ծագեր են ի Թաշ-
խանս տրոց հաւաքման աւթիւ. երկու օր
կուսեր են փողոցներուն մէջ. կորուստք
ծանր են Ռուսաց եւ բնիկներուն կողմէ բա-
րեկարգութիւնը կարելի եղեր է վերահաս-
տատուիլ շնորհիւ մոլաներուն միջամտու-
թեան:

Բարիզ, 5 յունիս

Լը Ֆլօ զօրավարը նամակ մը հրատա-
րակելով կը հաստատէ իւր բոլոր յայտնու-
թիւններն ի մասին Պ. աը Ռատովիչի՝ պաշ-
տօնին եւ դերին 1875ին:

(Ինչպէս կը յիշուի, մայրաքաղաքիս դեր-
մանական դեսպանը տաղաքական տեսչու-
թեան միջոցաւ իրեւ «պայծա» հերքել աը-
ուած էր Լը Ֆլօ զօրավարին յայտնու-
թիւնն՝ 1875ին Թուրքիոյ մասին Գերմա-
նիոյ կողմէ եղած առաջարկին նկատմամբ):

Աթէնք, 4 յունիս

Պ. Դրիգուբի, Երեսփոխանաց ժողովոյն
հաղորդելով փոխառութեան կնքման լու-
րը, ծանոց թէ կառավարութիւնն երեսուն

միլիոն ֆրանքի արժեքով երեք զրահաւոր յանձնարարներ է :

Հնարողաց բազմաթիւ խումբ մը Աթէնքի քաղաքապետութեան ընտրելի կառավարիչէ զՊ. Սինկրոս :

Աթէնք, 5 յունիս
Երեսօր. ժողովոյ նստաշրջանն երէկ փակուեցաւ, օրակարգին և ելմտացոյցին քըուէարկութիւնն աւարտած լինելով :

Թագաւորը Լոնտոն պիտի երթայ յունիս 10 ին : Թագուհին պիտի երթայ Մարիէնպատի ջուրերն և Թագաւորին պիտի միանայ ի Բօքէնհայ :

Բարիզ, 8 յունիս
Պ. Էրէնզ գաղթականութեանց նախարարութեան խորհրդական անուանեցաւ :

Մոսկուա, 8 յունիս
Շրջաբերական մը կը հրամայէ որ Պալդիկեան նահանգաց վարժարանաց մէջ դասախօսութիւնը յայտնեալ օրերէն լինին :

Աթէնք, 8 յունիս
Թագաւորը կը մեկնի վաղն, և ծպտեալ պիտի անցնի Բարիզէ, ուր քանի մը օր պիտի մնայ Գահաժառանգ իշխանին հետ :

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ
ԵՐՈՒԱՆԴ Կ. ԳԱՐԺԱՆԼԵԱՆ

Գրաստան
Հափական գիտութեանց

Ազգային դաստառներէն երուանդ էՖ. Կ. Գարթալեանի սոյն դասագիրքն, որ կը պարունակէ Թուարանութեան տեսական և գործնական մասը միանգամայն, բազմամայ փորձառութեան և մեծ խնամոց արգիւնք է :

Թուարանութեան բոլոր կանոնք կոկիկ և դիւրմբունի ոճով բացատրուած են, և մեղրական, չահու և վաճառականական հաշուցներաբերեալ կանոնք ընդարձակ տեղ մը կը գրաւեն սոյն նոր դասագիրքին մէջ :

Բաց աստի, մասնաւոր ուշադրութիւն եղած է որ իւրաքանչիւր կանոնի յարակից խնդիրք Թուրքիոյ առեւտրական գործառնութեանց և առանին կենաց պիտոյից համաձայն ըլլան, առանց որոյ Թուարանական խնդիրք շատ անգամ տալտկացուցիչ և աւելորդ կ'ըլլան :

Հմուտ Թուարանին սոյն աշխատասիրութիւնը մեր ազգ. վարժարանաց մէկ զգալի պէտքը կուգայ յրացնել և բառնալ աշակերտաց ձեռքէն աւանդական գրութեամբ պատրաստուած շատ մը դասագրեանք :

Կը գտնուի ամէն գրաւաճառաց քով, կեդրոնատեղին է Յակոբեան խան, Թիւ 14, Եւրոպական գրատուն, Ա. Պիպէոճեանի քով :

Գինն է 10 զրուշ
Շատ աւելոյն մասնաւոր զեղջ կ'ըլլուի :
886 2-80

Ջերմագէտ կը յանձնարարենք մեր ընթերցողաց գործածել Հէնրի Միւռի Օշօրակն, բուժելու համար իրենց ջղային հիւանդութիւնները, գլխու պտոյտները, քընատութիւնները, ջղային ցնցումներն ևն :

Փոքրաքանակ կը վաճառուի ամէն գեղատանց մէջ : Կեդրոնատեղին է Դեղագործական Մթերանոցն, 55, Ղալաթիա մեծ փողոց :
776

ԲԱՐԵԿԱՄ ԱՄԵՆԵՑՈՒՆ

ԳՐԲՈՅԿ ԲԺՇԿԱԿԱՆ

«Ըստ հօթօքմէի գրութեան»

Աշխարհաբէն Ըր. Յ. Ճ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Նմանաբուժական գրութեամբ յօրինուած սոյն բժշկական գիրքն, իբր 300 երեսէ բաղկացեալ և մաքուր տապաղութեամբ Աւետի տպարանէն ի լոյս ընծայեալ, կը խօսի նմանաբուժական դեղոց և դարմանաց վրայ, իւր տեսակին մէջ առաջին գիրքն է այս որ կը հրատարակուի ի Թուրքիա :

Կը գտնուի Պոլսոյ ամեն հայ գրաւաճառաց քով, ի Պահչէ-Դարու ջրավաճառ Պօղոս աղայի խանութն և Բերա, Թիւնէլի դիմաց, Յարութիւն Նալպանդեանի գրատունը :

Գին 15 զրշ. և 20 զրշ. 2-4
885

ԿԱԼԶԻՒ ՄԻՋՈՏԱՍՊԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄԵՆԱԶԳՈՒ ԴԵՂ ՍԷ ՄԼԵԿՆԵՐՈՒ, ԼՈՒԵՐՈՒ, ՈՋԻՆԵՐՈՒ, ՃԱՆՃԵՐՈՒ, ՄԺԵՂՆԵՐՈՒ, ՄՐՋԻՆՆԵՐՈՒ, ԹՐԺՈՒՐՆԵՐՈՒ, ՏՈՐԵՆԻ ՈՐԴԵՐՈՒ ԼԸՆ ԴԷՄ :

Քիլոն կը ծախուի 12 Փրանք. թըղթատարութեան միջոցաւ, 100 կրամն 1.95 Փր. է : Դիմելու է առ Է. ԿԱԼԶԻ, 71, Գուռ տ'Երպոնքիլ, Լիոն :

Արեւելից համար ներկայացուցիչն է Դեղագործական Մթերանոցն, Ղալաթիոյ Մեծ Փողոց, 55, Կ. Պոլիս :

796 5-10

Սրտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՎԵԼԻ ԻՐԱԳՐՈՒ



ՄԼՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԻՐԷՐՈՒՆԵՐՈՒ ՄԼՐ. ՆՈՐՈԳԻՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը : Գլխու թեփը շուտ մը անկեղծ կ'ընէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի :

«Մէկ շիշ կը բաւէ :» Եւ քիչ քիչ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքադունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :
«Կերկ չէ, և ամենեւին զեան մը չընէ : Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ՄԼՐ. ՆՈՐՈԳԻՐ :»
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւրաքանչիւր և անգղիացի զեղագործներու քով :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւք եղբայրք բրիտանական զեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էմբրնտ Գարուան, Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալաթըմ. և Իլիտօր Լազանտէլա 455, Բերա Մեծ փողոց :



ՆԵՐՍԵՆԵԿԼԵՆ ԴՆԴԿԵՓՈՒՆԸ

ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՂ ՄԼՐՈՒՆՈՅ ԳՈՅՆԵՐ, ՍԻՇՏ

ԴՆԴԿԵՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՄ :

Նշգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերաշանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշիներէ : Նշալին անգամ գոյժած երեւոյթ ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խելոյն որ երեսը, վիզը, թեւերը և ձեռքերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարիմնի փայլ, հանգերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ : Ասպոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն : Միշտ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի և ձեռքի ցանեղը, արեւայրուրը, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն : Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուիլ թէ արհեստով զեղեցկացուած է :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւրաքանչիւր և անգղիացի զեղագործներու քով :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւք եղբայրք բրիտանական զեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էմբրնտ Գարուան, Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալաթըմ. և Իլիտօր Լազանտէլա 455, Բերա Մեծ փողոց :



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ :

ՄԼԷՐՈՒՅ

ՄԼՐ.ՆՈՐՈԳԻՐ ՄԼԿ ՆԵՐՍԵՆԵԿԼԵՆ ՆՈՐՈԳԻՐ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը : Կը զաղբեցունէ անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :

Կը վաճառուի երկու չափով մեծ շիշերու մէջ :
Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւք եղբայրք բրիտանական զեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էմբրնտ Գարուան, Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալաթըմ. և Իլիտօր Լազանտէլա 455, Բերա Մեծ փողոց :